

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 ապրիլի 2014 թ.

N 198-Ն

ք. Ստեփանակերտ

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅՅՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Ընդերքի մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Սահմանել երկրաբանական ուսումնասիրության նպատակով համաձայնություն հայցող կազմակերպության ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկությունների բովանդակությունը և դրանց ներկայացվող պահանջները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԵՐԿՐԱՔԱՆԱԿԱՆ ՈւՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅՅՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

1. Երկրաբանական ուսումնասիրության նպատակով համաձայնություն հայցող կազմակերպությունը (այսուհետ՝ դիմումատու), Ընդերքի մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքի համաձայն, դիմումին կից ներկայացվող ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկությունները ներկայացնում է սույն պահանջներին համապատասխան:

2. Դիմումատուն լիազոր մարմին է ներկայացնում՝

1) երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրով (այսուհետ՝ ծրագիր) պահանջվող ինժեներատեխնիկական կազմի առկայության մասին տեղեկանք՝ համաձայն N 1 ձևի, իսկ համապատասխան մասնագետների հետ կնքված պայմանագրերի դեպքում՝ նաև համապատասխան պայմանագրերի պատճենները.

2) ծրագրի իրականացման համար անհրաժեշտ՝

ա. տեխնիկական կարողությունների ու միջոցների առկայության մասին տեղեկանք՝ համաձայն N 2 ձևի, իսկ օրենքով սահմանված կարգով օգտագործման իրավունքով պատկանող տեխնիկական միջոցի համար՝ նաև համապատասխան պայմանագրի պատճենը,

բ. ֆինանսական միջոցների մասին տեղեկանք՝ համաձայն N 3 ձևի, իսկ տրամադրված վարկային գծի կամ բանկային երաշխիքի, կամ ֆինանսական միջոցների փոխառության առկայության դեպքում՝ նաև համապատասխան ֆինանսական կազմակերպության հետ կնքված պայմանագրի պատճենը:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՎ
ՊԱՀԱՆՋՎՈՂ ԻՆժԵՆԵՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

ՈՒՍՈՒՄ Ը/Կ	Մասնագետի անունը, ազգանունը	Որակավորումը	Մասնագիտական աշխատանքի փորձը	Նախկինում կատարած աշխատանքի անվանումը
1	2	3	4	5
1.				
2.				
3.				

Կից ներկայացնում եմ

ինժեներատեխնիկական կազմը հավաստող աշխատանքային պայմանագրերի
պատճենները:

(կազմակերպության անվանումը, ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

_____ 20 թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

№ ը/կ	Տեխնիկական միջոցի անվանումը	Քանակը	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքի տեսակը	Տեխնիկական միջոցի տեխնիկական վիճակը (սարքին է կամ ենթակա է վերանորոգման)
1	2	3	4	5
1.				
2.				
3.				

Կից ներկայացնում եմ

տեխնիկական միջոցների նկատմամբ օգտագործման իրավունքը հավաստող պայմանագրերի պատճենները:

(կազմակերպության անվանումը, ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

_____ 20 թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ
ԿՆՔՎԱԾ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՄ ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔԻ ԿԱՄ
ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

_____ -ը հավաստում է, որ
(կազմակերպության անվանումը)
իր ֆինանսական միջոցները _____
(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

դրությամբ կազմում են _____ դրամ:
Կից ներկայացնում են _____
ֆինանսական կազմակերպության հետ կնքված վարկային գծի տրամադրման
կամ բանկային երաշխիքի, կամ ներգրավված ֆինանսական միջոցների
փոխառության մասին պայմանագրի պատճենը:

_____ (կազմակերպության անվանումը, ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը) _____ (ստորագրությունը)

_____ 20 թ.